

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

"B

Կենցաղային էլեկտրական վառարանների էներգետիկ պիտակավորման վերաբերյալ
Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 թվականի մայիսի 8-
ի 2002/40/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 128, 15.05.2002, էջ 45)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		Թիվ	Էջ	Ամսաթիվ
"M1	<u>Հանձնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 23-ի 2006/80/ԵՀ հրահանգով</u>	L 362	67	20.12.2006

Փոփոխված՝

"A1		L 236	33	23.9.2003
------------	--	-------	----	-----------

«Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության ու Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմանների և Եվրոպական Միության հիմնադրման մասին» պայմանագրերին համապատասխան կատարվող կարգավորումների

մասին ակտով:

Ուղղված՝

"C1 ՊՏ L 033, 08.02.2003 թ., էջ 43 (02/401) ուղղումով

"B

**Կենցաղային էլեկտրական վառարանների էներգետիկ պիտակավորման վերաբերյալ
Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 թվականի մայիսի
8-ի 2002/40/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» Պայմանագիրը,

հաշվի առնելով «Պիտակավորմամբ և արտադրանքի ստանդարտ տեղեկությունների միջոցով
կենցաղային տեխնիկայի էներգիայի սպառման և այլ ռեսուրսների վերաբերյալ նշման մասին»
Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը (1) և, մասնավորապես,
դրա 9-րդ հոդվածը,

Քանի որ

- 1) 92/15/ԵՏՀ հրահանգը պահանջում է, որ Հանձնաժողովն ընդունի կիրարկող
հրահանգներ՝ կապված կենցաղային տարբեր սարքավորումների հետ՝ ներառյալ էլեկտրական
վառարանները,
- 2) էլեկտրական վառարանների կողմից օգտագործված էլեկտրականությունը Համայնքի
էներգիայի պահանջի զգալի մասն է կազմում.
- 3) ներդաշնակեցված ստանդարտները Ստանդարտացման եվրոպական մարմինների
կողմից ընդունված տեխնիկական մասնագրեր են, որոնք նշված են Տեխնիկական
ստանդարտների ու կանոնակարգերի և տեղեկատվական հասարակությանը բնորոշ
ծառայությունների վերաբերյալ կանոնների բնագավառում տեղեկատվության տրամադրման
ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հունիսի
22-ի թիվ 98/34/ԵՀ հրահանգի I հավելվածում (²)՝ փոփոխված 98/48/ԵՀ հրահանգով (³),
- 4) պետք է տրվեն օդում տարածվող աղմուկի վերաբերյալ տեղեկությունները, եթե այդպես
են պահանջում անդամ պետությունները՝ համաձայն «Կենցաղային սարքավորումների կողմից
օդում տարածված աղմուկի մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 1-ի հրահանգի (⁴),

5) Էլեկտրական վառարանների վերաբերյալ Խորհրդի 1979 թվականի մայիսի 14–ի 79/531/ԵՏՀ հրահանգը, «Պիտակավորման միջոցով կենցաղային տեխնիկայի էներգիայի սպառման վերաբերյալ նշման մասին» Խորհրդի 79/530/ԵՏՀ հրահանգը (⁵), որը վերջին անգամ փոփոխվել է «Ավստրիայի, Ֆինլանդիայի և Շվեդիայի անդամակցության մասին» ակտով, պետք է սույն Հրահանգի կիրառման պահից ուժը կորցրած ճանաչվի,

6) քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են 92/75/ԵՏՀ հրահանգի 10–րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգը կիրառվում է էլեկտրական լարերով աշխատող կենցաղային էլեկտրական վառարանների նկատմամբ՝ ներառյալ ավելի մեծ սարքավորման մաս կազմող վառարանները:

2. Սույն Հրահանգը չի կիրառվում հետևյալ վառարանների նկատմամբ՝

ա) վառարաններ, որոնք կարող են նաև էներգիայի այլ աղբյուրներ օգտագործել,

բ) վառարաններ, որոնք դուրս են 2–րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտների գործողության ոլորտից,

գ) շարժական վառարաններ, որոնք տարբերվում են ֆիքսված սարքավորումներից և ունեն 18 կգ–ից պակաս զանգված՝ պայմանով, որ դրանք նախատեսված չեն ներկառուցված սարքավորումների համար:

3. Բացի տաք գոլորշու ֆունկցիայի էներգասպառումից գոլորշու այլ ֆունկցիաներն ընդգրկված չեն սույն Հրահանգի շրջանակներում:

Հոդված 2

1. Սույն Հրահանգի կողմից պահանջվող տեղեկությունները պետք է ձեռք բերվեն այն ներդաշնակեցված ստանդարտների համաձայն իրականացված գնահատման միջոցով, որոնք ընդունվել են Էլեկտրատեխնիկայի ստանդարտացման Եվրոպական կոմիտեի (ՍԵՆԷԼԵԿ) կողմից Հանձնաժողովի թույլտվության ներքո՝ համաձայն 98/34/ԵՀ հրահանգի և որոնք համարները հրապարակվել են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում, և

որոնց համար անդամ պետությունները հրապարակել են նշված ներդաշնակեցված ստանդարտները փոխատեղող ազգային ստանդարտների համարները:

Սույն Հրահանգի I, II և III հավելվածների դրույթները, որոնք աղմուկի վերաբերյալ տեղեկություններ են պահանջում, կիրառվում են միայն այն դեպքում, երբ այդ տեղեկություններն անհրաժեշտ են անդամ պետություններին՝ համաձայն 86/594/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի: Այս տեղեկությունները գնահատվում են այդ հրահանգի համաձայն:

2. Սույն Հրահանգում օգտագործված արտահայտություններն ունեն նույն իմաստները, ինչպես որ 92/75/ԵՏՀ հրահանգում:

Հոդված 3

1. 92/75/ԵՏՀ հրահանգի 2 (3) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը պետք է ընդգրկեն՝

ա) մատակարարի անունը և հասցեն.

բ) մոդելի ընդհանուր նկարագիրը, որը բավարար կլինի այն միանշանակ և հեշտությամբ ճանաչելու համար.

գ) տեղեկություններ՝ ներառյալ համապատասխան պատկերները, մոդելի նախագծի հիմնական առանձնահատկությունների և, մասնավորապես, այն առարկաների վերաբերյալ, որոնք զգալիորեն ազդում են դրա էներգասպառման վրա.

դ) հաշվետվություններ համապատասխան չափումների փորձարկումների վերաբերյալ, որոնք իրականացվում են 2(1) հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտներում ներկայացված փորձարկումների ընթացակարգերի համաձայն.

ե) շահագործման վերաբերյալ ցուցումներ, եթե այդպիսիք կան:

2. 92/75/ԵՏՀ հրահանգի 2 (1) հոդվածում նշված պիտակը պետք է լինի այնպես, ինչպես նշված է սույն Հրահանգի I հավելվածում:

Պիտակը պետք է փակցվի սարքավորման դռնակի վրա այնպես, որ լինի հստակ տեսանելի և չաղավաղված: Բազմառեզոնատոր վառարանների դեպքում յուրաքանչյուր ռեզոնատորը պետք է ունենա իր ուրույն պիտակը՝ բացառությամբ այն ռեզոնատորի, որը չի մտնում 2-րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտների գործողության շրջանակի մեջ:

3. 92/75/ԵՏՀ հրահանգի 2 (1) հոդվածում նշված տեղեկաթերթիկի բովանդակությունն ու ձևաչափը պետք է լինի այնպես, ինչպես նշված է սույն Հրահանգի II հավելվածում:

4. Եթե սարքավորումները վաճառքի, վարձույթի կամ ապառիկ վաճառքի են հանվում տպագրված կամ գրավոր հաղորդակցությունների կամ այլ միջոցներով, որոնք պոտենցիալ հաճախորդին հնարավորություն չեն տալիս տեսնելու ցուցադրված սարքավորումը՝ ինչպես օրինակ գրավոր առաջարկը, փոսային պատվերի կատալոգը, համացանցով կամ էլեկտրոնային կրիչով գովազդները, ապա հաղորդակցությունը պետք է պարունակի III հավելվածում ներկայացված բոլոր տեղեկությունները:

Այս պահանջները կիրառվում են նաև միասնական խոհանոցների համար նախատեսված ներկառուցված վառարաններ պատրաստելու առաջարկների նկատմամբ:

5. Վառարանի յուրաքանչյուր ռեզոնատորի էներգաարդյունավետության դասը որոշվում է IV հավելվածի համաձայն:

6. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածում նշված պիտակում և տեղեկաթերթիկում օգտագործվելիք պատշաճ եզրույթները պետք է ընտրվեն սույն Հրահանգի V հավելվածում ներկայացված աղյուսակից:

Հոդված 4

Անդամ պետությունները, մինչև 2003 թվականի հունիսի 30-ը, թույլ են տալիս արտադրանքների շուկայահանումը և (կամ) ցուցադրումը և 3(4) հոդվածում նշված հաղորդակցությունների տարածումը, որոնք չեն համապատասխանում սույն Հրահանգին:

Հոդված 5

1. Մինչև 2002 թվականի դեկտեմբերի 31-ը անդամ պետություններն ընդունում և հրապարակում են սույն Հրահանգը կատարելու համար անհրաժեշտ դրույթները: Երանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երանք այդ դրույթները կիրառում են 2003 թվականի հունվարի 1-ից:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Անդամ պետությունները որոշում են նման հղում անելու ձևը:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն ազգային իրավունքի ակտերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 6

79/531/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2003 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 7

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 8

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՊԻՏԱԿԸ

Պիտակի դիզայնը

1. Պիտակը պետք է լինի համապատասխան լեզվով՝ ընտրված հետևյալ նկարազարդումներից՝


Energy

Electric oven

Manufacturer
Model

Logo
A B C 1 2 3

More efficient



Less efficient

Energy consumption (kWh)

Heating function:

Conventional

Forced air convection

X.YZ

X.YZ

(based on standard load)

Usable volume (litres)

XYZ

Size:

Small

Medium

Large

—

—

—



Noise

(dB(A) re 1 pW)

Further information is contained
in product brochures

Norm EN 50304
Electric ovens
Energy Label Directive 2002/40/EC



2

2. Հետևյալ ծանոթագրությունները նախատեսում են այն տեղեկությունները, որոնք պետք է ընդգրկված լինեն՝

**Ծանոթագրու-
թյուն**

- I. Մատակարարի անվանումը կամ ապրանքանշանը:
- II. Մատակարարի մոդելի տարբերակիչ նշանը:
- III. Մոդելի ռեզոնատոր(ներ)ի էներգաարդյունավետության դասը՝ որոշված IV հավելվածի համաձայն: Ցուցիչ տառը կրող սլաքի ծայրը պետք է փակցվի նույն մակարդակում, որտեղ փակցված է համապատասխան դասի սլաքի ծայրը:

Ցուցիչ տառը կրող սլաքի բարձրությունը չպետք է լինի պակաս (և ոչ էլ երկու անգամ ավել), քան դասերի սլաքների բարձրությունը:
- IV. Չհակասելով էկո-պիտակավորման սխեմայով նախատեսված որևէ պահանջներին, եթե մոդելին շնորհվել է «Եվրոպական միության էկո-պիտակավորում»՝ համաձայն «Համայնքի էկոպիտակավորման շնորհման վերանայված համակարգի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1980/2000 (ԵՀ) կանոնակարգի (6), այստեղ պետք է ավելացվի նաև էկո-պիտակի պատճենը:
- V. Ջեռուցման ֆունկցիա(ներ)ի (պայմանական և (կամ) հարկադիր օդափոխմամբ) (սարքավորումների) էներգասպառումը՝ արտահայտված կՎտժ-ով՝ ըստ ստանդարտ պարունակության, որը որոշվում է համաձայն 2-րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտներում ներկայացված փորձարկումների ընթացակարգերի:
- VI. Ռեզոնատորի օգտակար ծավալը՝ արտահայտված լիտրերով, որը որոշվում է համաձայն 2-րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտների:

VII. Սարքավորման չափսը, որը որոշվում է հետևյալ կերպ՝

Փոքր՝	$12 \text{ l} \leq \text{ծավալը} < 35 \text{ l}$
Միջին՝	$35 \text{ l} \leq \text{ծավալը} < 65 \text{ l}$
Մեծ՝	$65 \text{ l} \leq \text{ծավալը}$:

Ցուցիչ սլաքը պետք է փակցվի այն միևնույն մակարդակում, որտեղ փակցվում է համապատասխան չափսը:

VIII. Where applicable, noise measured during the function determining the energy efficiency, determined in accordance with Directive 86/594/EEC (7).

Ծանոթություն՝

Վերևում նշվածների այլ լեզուներով համարժեք եզրույթները ներկայացված են V հավելվածում:

Տպագրումը

3. 3. Հետևյալը սահմանում է պիտակի որոշ ասպեկտները՝

Օգտագործվող գույները՝

ՓՄԴՍ— փիրուզագույն, բաց մանուշակագույն, դեղին, սև:

Օրինակ՝ 07X0:0 % փիրուզագույն, 70 % բաց մանուշակագույն, 100 % դեղին, 0 % սև:

Սլաքները

A X0X0

B 70X0

C 30X0

D 00X0

E 03X0

F 07X0

G 0XX0

Ուրվագծող գույն՝ X070

Էներգաարդյունավետության դասին ցուցիչ սլաքի ֆոնային գույնը սև է:

Ամբողջ տեքստը սև է: Ֆոնը սպիտակ է:

5 mm

73 mm

33 mm

5 mm

41 mm

90 mm

39 mm

10 mm

25 mm

44 mm

Energy

Electric oven


Manufacturer

Logo

Model

ABC 123

More efficient



Less efficient

Energy consumption (kWh)

Heating function:

Conventional

X.YZ

Forced air convection

X.YZ

(based on standard load)

Usable volume (litres)

XYZ

Size:

Small



Medium



Large



Noise

(dB(A) re 1 pW)

Further information is contained
in product brochures

Norm EN 50304
Electric ovens
Energy Label Directive 2002/40/EC



ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿԸ

Տեղեկաթերթիկի վրա նշվում են հետևյալ տեղեկությունները: Տեղեկությունները կարող են ներկայացված լինել աղյուսակի տեսքով, որոնք ընդգրկում են միևնույն մատակարարի կողմից մատակարարված մի շարք մոդելներ, որի դեպքում տեղեկությունները տրվում են նախատեսված կարգով կամ մոդելի նկարագրին մոտ՝

1. 1. մատակարարի ապրանքանշանը.
2. 2. մատակարարի մոդելի տարբերակիչ նշանը.
3. 3. մոդելի ռեզոնատոր(ներ)ի էներգաարդյունավետության դասը՝ որոշված IV հավելվածի համաձայն: «Էներգաարդյունավետության դասը» արտահայտվում է դասակարգման հետևյալ սանդղակով՝ A-ից (ավելի արդյունավետ) G (պակաս արդյունավետ): Եթե այս տեղեկությունը տրամադրված է աղյուսակի տեսքով, ապա այն կարող է արտահայտվել այլ միջոցներով՝ պայմանով, որ պարզ լինի, որ այն ունի դասակարգման հետևյալ սանդղակը՝ A-ից (ավելի արդյունավետ) G (պակաս արդյունավետ): Ջեռուցման ֆունկցիայի վերաբերյալ նշում, որտեղ էներգաարդյունավետության դասը որոշված է.
4. 4. Եթե տեղեկությունը տրամադրված է աղյուսակի տեսքով և եթե աղյուսակում թվարկված սարքավորումներից մի քանիսին թիվ 1980/2000 (ԵՏՀ) կանոնակարգի համաձայն շնորհվել է «Եվրոպական միության էկո-պիտակ», ապա այդ տեղեկությունը կարող է ներառվել այստեղ: Այս դեպքում այդ շարքը պետք է կնքվի «Եվրոպական միության էկո-պիտակով» և շուկա մուտք գործելիս այն պետք է կրի էկո-պիտակավորման նշանի պատճենը: Այս դրույթը չի հակասում Համայնքի էկո-պիտակավորման սխեմայի որևէ պահանջներին.
5. 5. Ջեռուցման ֆունկցիա(ներ)ի (պայմանական և (կամ) հարկադիր օդափոխմամբ և (կամ) տաք գոլորշիով) (սարքավորումների) էներգասպառումը՝ արտահայտված կՎտժ-ով՝ ըստ ստանդարտ պարունակության, որը որոշվում է համաձայն 2-րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտներում ներկայացված փորձարկումների ընթացակարգերի.
6. 6. ռեզոնատորի օգտակար ծավալը՝ արտահայտված լիտրերով, որը որոշվում է համաձայն 2-րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտների.

7.

փոքր՝	$12 \text{ I} \leq \text{ծավալը} < 35 \text{ I}$
միջին՝	$35 \text{ I} \leq \text{ծավալը} < 65 \text{ I}$
մեծ՝	$65 \text{ I} \leq \text{ծավալը}$:

Յուրիչ սլաքը պետք է փակցվի այն միևնույն մակարդակում, որտեղ փակցվում է համապատասխան չափսը.

8. 2-րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտներում ներկայացված փորձարկումների ընթացակարգերի համաձայն որոշված ստանդարտ պարունակության «պատրաստման» համար անհրաժեշտ ժամանակը.
9. անհրաժեշտության դեպքում 86/594/ԵՏՀ հրահանգի ⁽⁷⁾ համաձայն որոշված էներգաարդյունավետությունը սահմանող ֆունկցիան իրականացնելիս չափվող աղմուկը.
10. էներգիայի սպառման նկարագրություն, երբ ջեռուցման ֆունկցիան չի կատարվում, և վառարանը գտնվում է էներգիայի սպառման նվազագույն ռեժիմում, հենց որ պարապ ընթացքի կորուստների համար նախատեսված համապատասխան ներդաշնակեցված ստանդարտը դառնում է մատչելի.
11. ամենամեծ տապակայի մակերեսը՝ արտահայտված սմ²-ով և սահմանված «մակերևույթի մակերեսը»՝ համաձայն 2-րդ հոդվածում նշված ներդաշնակեցված ստանդարտի:

Եթե պիտակի պատճենը, գունավոր կամ սև ու սպիտակ, ընդգրկված է տեղեկաթերթիկի մեջ, ապա ընդգրկման ենթակա են միայն հետագա տեղեկությունները:

Ծանոթություն՝

Վերևում նշվածների այլ լեզուներով համարժեք եզրույթները ներկայացված են V հավելվածում:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՎԱՃԱՌՔ ՓՈՍՏԱՅԻՆ ՊԱՏՎԵՐԻ ԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՈՎ

3(4) հոդվածում նշված փոստային պատվերի կատալոգները, հաղորդակցությունները, գրավոր առաջարկները, համացանցով կամ էլեկտրոնային այլ միջոցներով գովազդները՝ ներառյալ միասնական խոհանոցների համար նախատեսված ներկառուցված վառարաններ պատրաստելու առաջարկները, պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝ սահմանված կարգով՝

1. մատակարարի ապրանքանշանն ու մոդելի տարբերակիչ նշանը	(II հավելված, 1-ին և 2-րդ կետեր)
2. էներգաարդյունավետության դասը	(II հավելված, 3-րդ կետ)
3. էներգասպառումը	(II հավելված, 5-րդ կետ)
4. օգտակար ծավալը	(II հավելված, 6-րդ կետ)
5. չափսը	(II հավելված, 7-րդ կետ)
6. աղմուկը	(II հավելված, 9-րդ կետ):

Եթե տրվում է տեղեկաթերթիկի վրա պարունակվող այլ տեղեկություն, այն պետք է ունենա II հավելվածով նախատեսված ձևը և պետք է ներառվի վերևում նշված աղյուսակում՝ տեղեկաթերթիկի համար սահմանված հերթականությամբ:

Ծանոթություն՝

Վերևում նշվածների այլ լեզուներով համարժեք եզրույթները ներկայացված են V հավելվածում:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

Ռեզոնատորի էներգաարդյունավետության դասը որոշվում է հետևյալ կերպ՝

Աղյուսակ 1 – փոքրածավալ ռեզոնատորներ

Էներգաարդյունավետության դասը	Էներգասպառումը E (1)՝ (կՎտ/ժ)՝ ըստ ստանդարտ պարունակության
A	$E < 0,60$
B	$0,60 \leq E < 0,80$
C	$0,80 \leq E < 1,00$
D	$1,00 \leq E < 1,20$
E	$1,20 \leq E < 1,40$
F	$1,40 \leq E < 1,60$
G	$1,60 \leq E$

(1) Որոշված համաձայն I հավելվածի V ծանոթագրության:

Աղյուսակ 2 – Միջին ծավալով ռեզոնատորներ

Էներգաարդյունավետության դասը	Էներգասպառումը E (1)՝ (կՎտ/ժ)՝ ըստ ստանդարտ պարունակության
A	$E < 0,80$
B	$0,80 \leq E < 1,00$
C	$1,00 \leq E < 1,20$
D	$1,20 \leq E < 1,40$
E	$1,40 \leq E < 1,60$

F	$1,60 \leq E < 1,80$
G	$1,80 \leq E$
(1) Որոշված համաձայն I հավելվածի V ծանոթագրության:	

Աղյուսակ 3 – Մեծածավալ ռեզոնատորներ

Էներգաարդյունավետության դասը	Էներգասպառումը E (1)՝ (կՎտ/ժ)՝ ըստ ստանդարտ պարունակության
A	$E < 1,00$
B	$1,00 \leq E < 1,20$
C	$1,20 \leq E < 1,40$
D	$1,40 \leq E < 1,60$
E	$1,60 \leq E < 1,80$
F	$1,80 \leq E < 2,00$
G	$2,00 \leq E$
(1) Որոշված համաձայն I հավելվածի V ծանոթագրության:	

ՀԱՎԵԼՎԱԾ V

ՊԻՏԱԿՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Note	Fiche	Mail	ES	DA	DE	EL	EN	FR	IT	NL	PT	SV	FI
Label Annex I	e order Annex II	r Annex III											
⊗			Energía	Energi	Energie	Ενέργεια	Energy	Énergie	Energia	Energie	Energia	Energi	Energia
⊗			Horno eléctrico	El-ovne	Elektrobacköfen	Ηλεκτρικός φούρνος	Electric oven	Four électrique	Forno elettrico	Elektrische oven	Forno eléctrico	Elektrisk ugn	Sähköuuni
I	1	1	Fabricante	Mærke	Hersteller	Προμηθευτής	Manufacturer	Fabricant	Costruttore	Fabrikant	Fabricante	Leverantör	Tavarantoimittaja
II	2	1	Modelo	Model	Modell	Μοντέλο	Model	Modèle	Modello	Model	Modelo	Modell	Malli
⊗			Más eficiente	Lavt forbrug	Niedriger Verbrauch	Πιο αποδοτικό	More efficient	Économe	Bassi consumi	Efficient	►C1 Mais eficiente ◀	Låg förbrukning	Vähän kuluttava

⊗			Menos eficiente	Højt forbrug	Hoher Verbrauch	Λιγότερο αποδοτικό	Less efficient	Peu économe	Alti consumi	Inefficiënt	►C1 Menos eficiente ◀	Hög förbrukning	Paljon kuluttava
	3	2	Clase de eficiencia energética ... en una escala que abarca de A (más eficiente) a G (menos eficiente)	Relativt energiforbrug ... på skalaen A (lavt forbrug) til G (højt forbrug)	Energieeffizienzklasse ... auf einer Skala von A (niedriger Verbrauch) bis G (hoher Verbrauch)	Τάξη ενεργειακής απόδοσης ... σε μια κλίμακα από το A (πιο αποδοτικό) έως το G (λιγότερο αποδοτικό)	Energy efficiency class ... on a scale of A (more efficient) to G (less efficient)	Classement selon son efficacité énergétique ... sur une échelle allant de A (économe) à G (peu économe)	Classe di efficienza energetica ... su una scala da A (bassi consumi) a G (alti consumi)	Energie-efficiëntieklasse ... op een schaal van A (efficiënt) tot G (inefficiënt)	Clase de eficiéncia energética ... numa escala de A (eficiente) a G (ineficiente)	Energieeffektivitetsklasse på en skala från A (låg förbrukning) till G (hög förbrukning)	Energiatohokkuusluokka asteikolla A:sta (vähän kuluttava) G:hen (paljon kuluttava)

Note	Fich	Mail orde	CS	ET	LV	LT	HU	MT	PL	SK	SL
------	------	--------------	----	----	----	----	----	----	----	----	----

Label	e	r									
I	Anne	Anne									
Anne	x II	x III									
x I											
⊗			Energie	Energia	Enerģija	Energija	Energia	Enerģija	Energia	Energia	Energija
⊗			Elektrická trouba	Elektriaihi	Elektriskā cepeškrāsns	Elektrinė orkaitė	Villamos sütők	Forn ta' l-Elettriku	Piekarńnik elektryczny	Elektrická rúra na pečenie	Električna pečica
I	1	1	Výrobce	Tootja või kaubamärk	Ražotājs	Gamintojas	Gyártó	Manifattur	Producent	Výrobca	Proizvajalac
II	2	1	Model	Mudel	Modelis	Modelis	Típus	Mudell	Model	Model	Model
⊗			Úsporné	Tõhusam	Efektīvāk	Didžiausias efektyvumas	Kis fogyasztás	L-anqas li jaħlu	Bardziej efektywna	Viac úsporný	Manjša poraba energije
⊗			Méně úsporné	Vähemtõhus	Mazāk efektīvi	Mažiausias efektyvum	Nagy fogyasztás	L-aktar li jaħlu	Mniej efektywna	Menej úsporný	Večja poraba

						as					energije
3	2	Třída energetické účinnosti ... na stupnici od A (nejvyšší účinnost, tj. nízká spotřeba elektrické energie) do G (nejnižší účinnost, tj. vysoká spotřeba elektrické energie)	Energiatõhusus klass ... astmestikus A-st (vähe tarbiv) kuni G-ni (palju tarbiv)	Energoefektivit ātes klase... uz skalas no A (efektīvāk) līdz G (mazāk efektīvi)	Energijos vartojimo efektyvum o klasė skalėje nuo A (didžiausia s efektyvum as) iki G (mažiausia s efektyvum as)	Energiahatékonysági osztály az A-tól (A-hatékonnyabb) G-ig (G-kevesbé hatékony) terjedő skálán	II-klassi ta' l-effiċjenza ta' l-enerġija ... skala ta' bejn A (jaħlu ftit u Ġ (jaħlu ħafna)	Klasa efektywności energetycznej ... w skali od A (bardziej efektywna) do G (mniej efektywna)	Trieda energetick ej hospodárn osti pomocou stupnice od A (viac energij e) úsporná) po G (menej úsporná)	Razred energijske učinkovitosti na lestvici od A (manjša poraba energije) do G (večja poraba energije)	
		Užitečná plocha	Küpsetusala	Cepšanas virsma	Kepimo plotas	Sütötér	L-ispazju tal-ħami	Powierzchnia a pieczenia	Priestor na pečenie	Površina za peko	

V	5	3	Spotřeba energie	Energiatarbivus	Enerģijas patēriņš	Suvartoja mas energijos kiekis	Energiafel-használás	Il-konsum ta' l-enerģija	Zużycie energii	Spotreba energie	Poraba energije
V	5	3	kWh	kWh	kWh	kWh	kWh	kWh	kWh	kWh	kWh
V	5	3	Tepelná funkce	Soojendus-funksioon	Karsēšanas režīms	Kaitinimo tipas	Fűtési funkció	Funzjoni ta' tisħin	Funkcja grzewcza	Funkcia pečenje	Način ogrevanja
V	5	3	Konvenční tepelná funkce	Traditsiooniline (ülevalt ja altpoolt soojendus)	Parasts	Įprastinis	Hagyományos	Konvenzjoni	Z konwekcją naturalną	Konvenčné	Klasični
V	5	3	Nucená konvekce vzduchu	Pöördõhk	Pastiprināta gaisa konvekcija	Priverstinės oro konvekcijos	Mesterségeslevegőáramoltatás	Konvezzjoni ta' arja forzata	Z wymuszonym obiegiem powietrza	S vnúteným prúdením vzduchu	S prisilnim kroženjem zraka
V	5	3	S normalizovana zátěž	Põhineb standard-koormusel	Balstīts uz standarta devu	Remiantis standartine apkrova	Standard terhelés alapján	l-bbażat fuq tagħbija normali	Przy standardowym	Vztiahnuté na štandardnú	Pri standardnem

				(tehtud testil)						obciążeniu	zát'až	bremenu
VI	6	4	Užitečný objem (litry)	Kasutatav ruum (liitrites)	letilpība (litros)	Naudingas is tūris (litrans)	Használható térfogat (liter)	Volum li jista'jintuža (litri)	Objętość użytkowa (litry)	Využitel'ný objem (litre)	Uporabna prostornina (litri)	
VII	7	5	Typ	Tüüp	Lielums	Dydis	Méret	Daqs	Rozmiar	Vel'kost'	Velikost	
VII	7	5	Malý	Väike	Maza	Mažas	Kicsi	Žgħir	Mały	Malá	Majhna	
VII	7	5	Střední	Keskmine	Vidēja	Vidutinis	Közepes	Medju	Średni	Stredná	Srednja	
VII	7	5	Velký	Suur	Liela	Didelis	Nagy	Kbir	Duży	Vel'ká	Velika	
	8		Doba tepelné úpravy normalizovaná zátěže	Valmistusaeg standardkoormusel	Standarta devas cepšanas laiks	Standartinės apkrovos kepimo trukmė	Sütési idő: standardterhelésnél	Ħin biex issajjar tagħbija normali	Czas potrzebny na upieczenie standardowe go wsadu	Čas na upečenie štandardnej zát'aže	Čas peke pri štandardnem bremenu	
IX	9	6	Hluk (dB(A) re 1	Mūra (dB(A) re 1 pW)	Troksnis (dB(A) re 1	Triukšmo vertė (dB(A)	Zaj (dB(A) 1 pW)	Il-livell tal-ħoss dB(A) re 1	Poziom hałas (dB(A) re 1	Hlučnost' (dB(A) re 1	Hrup (dB(A)	

			pW)		pW)	apie 1 pW)		pW	pW)	pW)	re 1 pW)
<input checked="" type="checkbox"/>			Další údaje jsou v návodu k použití	Kasutusjuhend sisaldab lisateavet	Sīkāka informācija norādīta brošūrā	Daugiau informacij os pateikiama gaminio aprašuose	További információk a termékismer-tetőben	Aktar informazzjoni tista' tinkiseb mill-manwali tal-prodott	Szczegółowe informacje zawarte są w instrukcji obsługi	Ďalšie informácie sú obsiahnuté vo výrobných katalógoch	Ostali podatki so navedeni v prospektu
	11		Plocha největšího plechu na pečení	Suurima küpsetus-plaadi ala	Lielākās cepešpannas laukums	Didžiausias kepimo lakšto plotas	A legnagyobb tepsi területe	L-ispazju ta' l-akbar daqs ta' reċipjent tal-ħami	Największa powierzchnia pieczenia	Plocha největších plechu na pečení	Površina najveće plošće za pečenje
<input checked="" type="checkbox"/>			Norma EN 50304	Standard EN 50304	Standarts EN 50304	Lietuvos Respublikos standartas LST EN	EN 50304 szabvány	L-Istandard EN 50304	Norma EN 50304	Norma EN 50304	Standard EN 50304

						50304					
			Směrnice 2002/40/ES pro označování elektrických trub energetický mi štítky	Elektri-ahjude energia- märgista-mise direktiiv 2002/40/EÜ	Elektrisko cepeškrāšņu marķēšanas direktīva 2002/40/EK	Elektrinių orkaičių vartojamo s energijos efektyvum o ženklavimo direktyva 2002/40/E B	A villamossütőkenergiafo- gyasztási címkézéséről szóló	Direttiva dwar it- tikketta ta' l-Eneġġija (2002/40/K E) fuq fran- ta' l- elettriku	Dyrektywa 2002/40/WE dotycząca etykiet energetyczn ych	Smernica 2002/40/E So energetick om štítkování elektrickýc h rúr na pečenie	Direktiva 2002/40/ ES o energijski nalepki za električne pečice

"M1

Note			BG	RO
Label	Fiche	Mail order		
Annex I	Annex II	Annex III		

⊗			Енергия	Energie
⊗			Електрическа фурна	Cuptor electric
I	1	1	Производител	Fabricant
II	2	1	Модел	Model
⊗			По-ефективен	Mai eficient
⊗			По-ниско ефективен	Mai puțin eficient
	3	2	Клас на енергийна ефективност ... върху скала от А (най-ефективен) до G (най-нискоефективен)	Clasa de eficiență energetică ... pe o scară de la A (mai eficient) la G (mai puțin eficient)
			Повърхност за печене	Suprafața de coacere
V	5	3	Консумация на енергия	Consum de energie
V	5	3	kWh	kWh
V	5	3	Функция нагряване	Funcția de încălzire
V	5	3	Естествена циркулация на въздуха	Convecție naturală
V	5	3	Принудителна циркулация на въздуха	Convecție forțată

V	5	3	Основана на стандартен товар	Calculat la sarcina standard
VI	6	4	Използваем обем (литри)	Volum util (litri)
VII	7	5	Размер	Tip
VII	7	5	Малък	Volum scăzut
VII	7	5	Среден	Volum mediu
VII	7	5	Голям	Volum mare
	8		Време, необходимо за 'готвене' при стандартен товар	Timp de coacere la sarcina standard
IX	9	6	Ниво на шум (dB(A) за 1 pW)	Nivel de zgomot (dB(A) re 1 pW)
<input checked="" type="checkbox"/>			Допълнителна информация се съдържа в техническия проспект	Fișa de informații conținută în broșurile produsului
	11		Площ на най-голямата повърхност за печене	Aria celei mai mari plăci de coacere
<input checked="" type="checkbox"/>			БДС EN 50304	Standard EN 50304
			Директива 2002/40/ЕО за електрически фурни	Directiva 2002/40/CE Etichetarea energetică a cuptoarelor

				electricice de uz casnic
--	--	--	--	--------------------------

(1) ՊՏ L 297, 13.10.1992թ., էջ 16:

(2) ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37:

(3) ՊՏ L 217, 05.08.1998թ., էջ 18:

(4) ՊՏ L 344, 06.12.1986թ., էջ 24:

(5) ՊՏ L 145, 13.06.1979թ., էջ 7:

(6) ՊՏ L 237, 21.09.2000թ., էջ 1:

(7) Համապատասխան ստանդարտերն են՝ ԱՆ 60704-2-10 (աղմուկի չափում) և ԱՆ 60704-3 (ստուգում):